

# 2021

2021 թուականին, Գալուստ Կիլպէնկեան Հիմնարկութեան Հայկական Համայնքներու Բաժանմունքը նպաստներ յատկացուց աւելի քան **82 նախագիծերու**:

Հաստատուած նախագիծերը հետեւեալ **15 երկիրներէն** են՝

Հայաստան, Աւստրիա, Պելճիքա, Պրագիլ, Գանատա, Չեխիա, Ֆրանսա, Գերմանիա, Իտալիա, Լիբանան, Փորթուկալ, Զուիցերիա, Թուրքիա, Անգլիա եւ Միացեալ Նահանգներ:

Նախագիծերը, իրենց ծաւալով, բնոյթով, տարողութեամբ եւ բովանդակութեամբ բազմազան են. օրինակ՝ հրատարակութիւններ եւ թարգմանութիւններ, կրթական, գրական եւ մշակութային ծրագիրներ, քաղաքացիական հասարակութեան վերաբերող ծրագիրներ, հետազօտութիւններ եւ աշխատանոցներ:

Բազմաթիւ նախագիծեր իրականացան համագործակցութեամբ Հայաստանի մէջ գործող կառոյցներու, օրինակ՝ Ճինիշեան յիշատակի հիմնադրամը, Արի գրականութեան հիմնարկը, Հայաստանի ազգային գրադարանը, Մատենադարանը, Հետքը, Հայ գիրքի կեդրոնը, Յառաջ հիմնադրամը, Հայաստանի Հանրապետութեան գիտութիւնների ազգային ակադեմիայի հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտը, Հայաստանի հանրային ձայնասփիւռը, Հայկական ճարտարապետութիւնը ուսումնասիրող կազմակերպութիւնը, ինչպէս նաեւ շատ մը անհատներու համագործակցութեամբ: Սփիւռքի մէջ եւ այլուր նպաստներ յատկացուեցան շարք մը կառոյցներու եւ անհատներու, օրինակ՝ Օրեր, Bureau international Catholique de l'enfance-ը, Համազգայինը, Բագինը, The Lebanese American University-ն, Պոլսոյ Կեդրոնական վարժարանը, Հրանդ Տինք հիմնարկը, Քամպրիճի համալսարանը եւ աւելին:

Ասոնց զուգահեռ, **ինը նպաստ** յատկացուեցաւ [արդէս](#) արեւմտահայերէն նպաստի ծրագիրին պարունակին մէջ:

*Գործընկերներու եւ նախագիծերու 2021-ի ամբողջական ցանկը կարելի է տեսնել [hnu](#):*